

**ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ**

**ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ**

**ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ**

Բաց Բաժնետիրական Ընկերություն





«Ա. ք. Երևան, Պուշկինի 19, հեռ. 54-78-95, ֆաքս 54-78-94, էլ. փոստ araratbank@araratbank.am

Հաշվետվություն թիվ 43, 19.04.12թ.


տեղաբաշխված արժեթղթերի դասը՝	բաժնետոմս,	պարտատոմս
արժեթղթերի քանակը՝	1,192,401 հատ,	25,000 հատ
արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝	5,000 ՀՀ դրամ,	10,000 ՀՀ դրամ

“Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ հաշվետվությունում ներառվող տեղեկությունները ճշգրիտ և սրբույզ են և չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել փաստաթղթի ամբողջականությունը”:

ստորագրող անձինք՝

<b>Սուրեն Կարապետյան</b>	Վարչության անդամ, Տարածքային ստորաբաժանումների գործունեության կոորդինացման բաժնի պետ		19.04.12թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
<b>Տիգրան Գալստյան</b>	Վարչության անդամ, Գլխավոր հաշվապահ		19.04.12թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
<b>Դավիթ Հարությունյան</b>	Վարչության անդամ, Գործադիր տնօրենի տեղակալ		19.04.12թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
<b>Նշան Գրիգորյան</b>	Վարչության անդամի ժ/պ, Գործադիր տնօրենի տեղակալ		19.04.12թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Ստորագրությունները հավաստում են՝

<b>Աշոտ Օսիպյան</b>	Վարչության նախագահ, Գործադիր տնօրեն		19.04.12թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)



19 ապրիլի 2012 թ.

## **Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի Ջրվեժ մասնաճյուղի ստեղծման, Ջրվեժ մասնաճյուղի 2012-2014թ.թ. գործունեության տնտեսական ծրագրի և կանոնադրության հաստատման մասին (ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ խորհրդի 2012 թվականի ապրիլի 18-ի թիվ 13/01Լ) որոշումը (ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ խորհրդի որոշումը կցվում է):

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ տնօրինություն



## ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԽՈՐՀՈՒՐԴ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 13/01 L

#### ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ՋՐՎԵԺ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված 23-ի 1-ին մասը, «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված 21<sup>6</sup>-ի 1-ին մասի ժդ) և ժը) կետերը, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կանոնադրության 12.1 կետի ժդ) և ի) ենթակետերը՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ խորհուրդը

### Ո Ր Ո Շ Ե Ց .

1. Ստեղծել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Ջրվեժ մասնաճյուղ՝ ՀՀ, ք. Երևան, Նոր Նորք, Ա. Քոչինյան փող., շինություն թիվ 3/5 հասցեում:
2. Հաստատել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Ջրվեժ մասնաճյուղի կանոնադրությունը՝ (կցվում է):
3. Հաստատել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Ջրվեժ մասնաճյուղի 2012-2014թթ.-ի գործունեության տնտեսական ծրագիրը (այդ թվում՝ առաջիկա երկու տարիների կանխատեսվող հաշվեկշիռը, եկամուտների ու ծախսերի նախահաշիվները)՝ (կցվում է):
4. Հանձնարարել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Գործադիր տնօրեն Ա. Օսիպյանին ապահովել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Ջրվեժ մասնաճյուղի գրանցման հետ կապված գործընթացը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Խորհրդի նախագահ՝



Բ. Բեգլարյան